ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔ

**ք. Վարդենիս** **18/07/2024**

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 8
# ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 24 անդամներ:

Բացակա էին՝ Արտակ Մանուկյանը, Արամ Մելքոնյանը, Դավիթ Շահնազարյանը

**Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝**

**Նիստը վարում էր ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Աիարոն Խաչատրյանը**

**Նիստը արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Կամո Զարոյանը**

Լսեցին
***ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՔԱՂԱՔԻ ԹԻՎ 1 ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ՉԳՈՐԾՈՂ ԵՐԿՀԱՐԿԱՆԻ ՄԱՆՍՆԱՇԵՆՔԻ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՄԱՆ ՇՄԱԳ ԵՎ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ***

*Ձեկ. ԱՀԱՐՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ*

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 42-րդ հոդվածի ու <<Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին>> ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի դրույթներով, հիմք ընդունելով ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի Վարդենիս քաղաքի թիվ 1 մանկապարտեզի չգործող երկհարկանի մասնաշենքի հիմնանորոգման վերաբերյալ 2024 թվականի հուլիսի 7-ին կայացած հանրային քննարկման արձանագրությունը՝ համայնքի ավագանին որոշում է.

1. Տալ համաձայնություն ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի Վարդենիս քաղաքի թիվ 1 մանկապարտեզի չգործող երկհարկանի մասնաշենքի հիմնանորոգման ՇՄԱԳ-Ի և փորձաքննության վերաբերյալ:

Համայնքի ղեկավարը նշեց, որ խոսքը վերաբերվում է Վարդենիս քաղաքի թիվ մեկ մանկապարտեզի հիմմանորոգման աշխատանքներին, և Դուք արդեն տվել եք Ձեր համաձայնությունը սուբվենցիոն ծրագրի շրջանակներում՝չգործող շենքի հիմնանորոգման համար: Համաձայն գործող օրենքի, նախագծա-նախահաշվային փաստաթղթերը համալիր փորձաքննություն իրականացնելու համար անհրաժեշտ է իրականացնել ՇՄԱԳ փորձաքննություն, որի վերաբերյալ 2024 թվականի հուլիսի 7-ին կայացել է հանրային քննարկում:

Անհրաժեշտ է տալ Ձեր համաձայնությունը՝ ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի Վարդենիս քաղաքի թիվ 1 մանկապարտեզի չգործող երկհարկանի մասնաշենքի հիմնանորոգման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության իրականացման համար:

Առարկություններ և առաջարկություններ չեղան:

24 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ ձայների հարաբերակցությամբ հարցն ընդունվեց:

Կողմ-24 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 99-Ա/

Լսեցին

***ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ԴԻՄՈՒՄՆԵՐԻ ՔՆՆԱՐԿՄԱՆ ԵՎ ԴՐԱՄԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՑԱԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ԱՀԱՐՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ/***

Ղեկավարվելով <<Սոցիալական աջակցության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 24-րդ հոդվածի դրույթներով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության 18-րդ հոդվածի դրույթներով՝ հիմք ընդունելով <<Կրթության, մշակույթի, սպորտի, երիտասարդության և սոցիալական աջակցության>> բաժնի կողմից կատարված ուսումնասիրության արդյունքները՝ համայնքի ավագանին որոշում է.

Վարդենիս համայնքի բյուջեի սոցիալական ծախսերից 4729 հոդվածից տրամադրել դրամական աջակցություն Վարդենիս համայնքի անապահով բնակիչներ՝

1. Գրիգորյան Անուշ / Նորաբակ/ 60000/վաթսուն հազար/ ՀՀ դրամ

2. Երանոսյան Մայրանուշ /Կարճաղբյուր/ 40000 /քառասուն հազար/ ՀՀ դրամ

3.Ղարիբյան Դավիթ /Վարդենիս, Ակունք/ 80000 /ութանասուն/ ՀՀ դրամ

4.Արզոյան Լուսինե /Վարդենիս/ 30000 /երեսուն հազար/ ՀՀ դրամ

5.Հարությունյան Էլմիրա /Կարճաղբյուր/ 50000 /հիսուն հազար/ ՀՀ դրամ

6.Գասպարյան Համլետ /Կարճաղբյուր/ 40000 /քառասուն հազար/ ՀՀ դրամ

7. Միրզոյան Միեր /Վարդենիս/ 70000 /յոթանասուն հազար/ ՀՀ դրամ

Համայնքի ղեկավարը առաջարկեց տալ համաձայնություն Վարդենիս համայնքի բյուջեի ընդհանուր ծախսերից 4729 հոդվածից տրամադրել դրամական աջակցություն Վարդենիս համայնքի վերոնշյալ անապահով բնակիչներին:

Առարկություններ և առաջարկություններ չեղան:

24 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ ձայների հարաբերակցությամբ հարցն ընդունվեց:

Կողմ-24 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 100-Ա/

Լսեցին

***<<ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՇԱՏՎԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ «ԲՈՒԺԱԿ ՄԱՆԿԱԲԱՐՁԱԿԱՆ ԿԵՏԻ» ԿԱՌՈՒՑՄԱՆ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ԱԲԳԱՐ ԱԲԳԱՐՅԱՆ/***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի դրույթներով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը և ԿԽՄԿ-ի, ՀՀ Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի և Վարդենիսի համայնքապետարանի կողմից կնքված փոխըմբռնման հուշագիրը՝ համայնքի ավագանին որոշում է

1.Տալ համաձայնություն <<ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի Շատվան բնակավայրում նախատեսվող «Բուժակ մանկաբարձական կետի» կառուցման>> ծրագրի իրականացմանը:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Հարցը ներկայացրեց համայնքի ղեկավարը առաջարկելով տալ համաձայնություն՝ հիմք ընդունելով եռակողմ փոխըմբռնման հուշագիրը. կնքված՝ Կարմիր խաչի միջազգային կոմիտեի , ՀՀ Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի և Վարդենիսի համայնքապետարանի միջև, <<ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի Շատվան բնակավայրում նախատեսվող «Բուժակ մանկաբարձական կետի» կառուցման>> ծրագրի իրականացման համար:

Առարկություններ և առաջարկություններ չեղան:

24 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ ձայների հարաբերակցությամբ հարցն ընդունվեց:

Կողմ-24 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 98-Ա/

Լսեցին

***ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 05-015-0023-0001 ԾԱԾԿԱԳՐՈՎ 0,96359ՀԱ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ <<ՎԱՐԵԼԱՀՈՂ>> ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ <<ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ>> ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ԱՀԱՐՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ/***

Ղեկավարվելով <<Հայաստանի Հանրապետության կառավարության>> 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն,որոշման 13-րդ և 49-րդ կետերի պահանջներով<<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածով, հիմք ընդունելով ՀՀ վարչապետի 2009թվականի դեկտեմբերի 22-ի թիվ 1064-Ա որոշմամբ ստեղծված <<ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի>>2024 թվականի հուլիսի 16-ի թիվ 1/փ-285 եզրակացությունը համայնքի ավագանին որոշում է.

1. ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի Արեգունի բնակավայրի վարչական սահմաններում ընգրկված համայնքային սեփականություն հանդիսացող (Սեփականության իրավունքի վկայականներ N30042024-05-0027) 0,96359 հա գյուղատնտեսական նշանակության <<վարելահողի>> նշանակությունը փոփոխել բնակավայրերի նպատակային նշանակության <<հասարակական կառուցապատման>> կրթահամալիր կառուցելու համար:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Հարցը ներկայացրեց համայնքի ղեկավարը նշելով, որ Խոսքը վերաբերվում է ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի Արեգունի բնակավայրի վարչական սահմաններում ընգրկված համայնքային սեփականություն հանդիսացող 0,96359 հա գյուղատնտեսական նշանակության <<վարելահողի>> նշանակությունը փոփոխելու բնակավայրերի նպատակային նշանակության <<հասարակական կառուցապատման>> , որպեսզի հետագայում կրկին ներկայացնենք Ձեզ, հետագայում ՀՀ Կառավարությանը նվիրաբերելու ՝ կրթահամալիր կառուցելու համար: Հավելեմ նաև, որ մեր այս առաջարկությունը ևս դրական եզրակացություն է ստացել միջգերատեսչական հանձնաժողովի կողմից:

Առարկություններ և առաջարկություններ չեղան:

24 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ ձայների հարաբերակցությամբ հարցն ընդունվեց:

Կողմ-24 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 97-Ա/

Լսեցին

***ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 05-064-0107-0075 ԾԱԾԿԱԳՐՈՎ 1.2ՀԱ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ <<ԱՅԼ ՀՈՂԱՏԵՍՔԻ>> ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ <<ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ>> ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ԱՀԱՐՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ/***

Ղեկավարվելով <<Հայաստանի Հանրապետության կառավարության>> 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն,որոշման 13-րդ և 49-րդ կետերի պահանջներով<<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածով, հիմք ընդունելով ՀՀ վարչապետի 2009թվականի դեկտեմբերի 22-ի թիվ 1064-Ա որոշմամբ ստեղծված <<ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի>>2024 թվականի հուլիսի 15-ի թիվ 2/փ-282 եզրակացությունը համայնքի ավագանին որոշում է.

1. ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի Մաքենիս բնակավայրի վարչական սահմաններում ընգրկված համայնքային սեփականություն հանդիսացող (Սեփականության իրավունքի վկայականներ N02052024-05-0062) 1.2 հա <<գյուղատնտեսական նշանակության>> այլ հողատեսքի նշանակությունը փոփոխել բնակավայրերի նպատակային նշանակության <<հասարակական կառուցապատման>> կրթահամալիր կառուցելու համար:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Համայնքի ղեկավարը նշեց, որ խոսքը վերաբերվում է ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի Մաքենիս բնակավայրի վարչական սահմաններում ընգրկված համայնքային սեփականություն հանդիսացող 1.2 հա <<գյուղատնտեսական նշանակության>> այլ հողատեսքի նշանակությունը փոփոխելուն՝ բնակավայրերի նպատակային նշանակության <<հասարակական կառուցապատման>>, որպեսզի հետագայում կրկին ներկայացնենք Ձեզ, հետագայում ՀՀ Կառավարությանը նվիրաբերելու ՝ կրթահամալիր կառուցելու համար: Հավելեմ նաև, որ մեր առաջարկությունը դրական եզրակացություն է ստացել միջգերատեսչական հանձնաժողովի կողմից:

Առարկություններ և առաջարկություններ չեղան:

24 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ ձայների հարաբերակցությամբ հարցն ընդունվեց:

Կողմ-24 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 96-Ա/

Լսեցին

***ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՆՎԻՐԱԲԵՐՎԱԾ ՎԱՐԴԵՆԻՍ ՔԱՂԱՔԻ Վ.ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ՓՈՂՈՑԻ 95 ՀԱՍՑԵԻ 600ՔՄ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. <u>ԱՀԱՐՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ</u>/***

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 594-րդ, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 89-րդ հոդվածներով և հիմք ընդունելով 26.06.2024թ. անշարժ գույքի նվիրատվության պայմանագիրը՝ համայնքի ավագանին որոշում է.

1. Ընդունել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի վարչական տարածքում գտնվող՝ Նելսոն Խաչատրյանի և Իրինա Խաչատրյանի սեփականություն հանդիսացող մարզ Գեղարքունիքի, համայնք Վարդենիս, Վարդենիս քաղաք Վ.համբարձումյան փողոց 95 հասցեի 0,06 հա հողամասի (սեփականության իրավունքի վկայական՝ 12072024-05-0056) (այսուհետ՝ գույք) նվիրատվությունը՝ Վարդենիս համայնքին:

Համայնքի ղեկավարը առաջարկեց տալ համաձայնություն՝ ընդունելու Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի վարչական տարածքում գտնվող՝ Նելսոն Խաչատրյանի և Իրինա Խաչատրյանի համատեղ սեփականություն հանդիսացող մարզ Գեղարքունիքի, համայնք Վարդենիս, Վարդենիս քաղաք Վ.համբարձումյան փողոց 95 հասցեի 0,06 հա հողամասի նվիրատվությունը՝ Վարդենիս համայնքին:

Առարկություններ և առաջարկություններ չեղան:

24 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ ձայների հարաբերակցությամբ հարցն ընդունվեց:

Կողմ-24 Դեմ-0 Ձեռնպահ-0

Լսեցին

***ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱԽԱԿԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՇՄԱԳ ԵՎ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ***

/Զեկ. ԱՀԱՐՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ/

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 42-րդ հոդվածի ու <<Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին>> ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի դրույթներով, հիմք ընդունելով ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի Կախակն բնակավայրի կրթահամալիր կառուցելու վերաբերյալ 2024 թվականի հունիսի 28-ին կայացած հանրային քննարկման արձանագրությունը՝ համայնքի ավագանին որոշում է.

1. Տալ համաձայնություն՝ ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի Կախակն բնակավայրում կրթահամալիրի կառուցման ՇՄԱԳ-ի և փորձաքննության վերաբերյալ:

Հարցը ներկայացրեց համայնքի ղեկավարը նշելով, որ Կախակն բնակավայրում ևս կրթահամալիր կառուցելու հարցի վերաբերյալ սույն թվականի հունիսի 28-ին, ժամը՝ 14:00-ին իրականացել է հանրային քննարկում, որը ստացել է դրական եզրակացություն, արդյունքները Ձեզ ներկայացված են: Առաջարկում եմ տալ Ձեր համաձայնությունը՝ ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի Կախակն բնակավայրում կրթահամալիրի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության վերաբերյալ:

Առարկություններ և առաջարկություններ չեղան:

24 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ ձայների հարաբերակցությամբ հարցն ընդունվեց:

Կողմ-24 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 94-Ա/

Լսեցին

***ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐԵԳՈՒՆԻ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՇՄԱԳ ԵՎ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ***

/Զեկ. ԱՀԱՐՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ/

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 42-րդ հոդվածի ու <<Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին>> ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի դրույթներով, հիմք ընդունելով ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի Արեգունի բնակավայրի կրթահամալիր կառուցելու վերաբերյալ 2024 թվականի հունիսի 28-ին կայացած հանրային քննարկման արձանագրությունը՝ համայնքի ավագանին որոշում է.

1. Տալ համաձայնություն` ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի Արեգունի բնակավայրում կրթահամալիրի կառուցման ՇՄԱԳ-Ի և փորձաքննության վերաբերյալ:

Հարցը ներկայացրեց համայնքի ղեկավարը նշելով, որ Արեգունի բնակավայրում ևս կրթահամալիր կառուցելու հարցի վերաբերյալ սույն թվականի հունիսի 28-ին, ժամը՝ 11:00-ին իրականացել է հանրային քննարկում, որը ստացել է դրական եզրակացություն, արդյունքները Ձեզ ներկայացված են: Առաջարկում եմ տալ Ձեր համաձայնությունը՝ ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի Արեգունի բնակավայրում կրթահամալիրի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության վերաբերյալ:

Առարկություններ և առաջարկություններ չեղան:

24 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ ձայների հարաբերակցությամբ հարցն ընդունվեց:

Կողմ-24 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 93-Ա/

Լսեցին

***ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՇԱՏՎԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՇՄԱԳ ԵՎ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ***

*/Զեկ. ԱՀԱՐՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ/*

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 42-րդ հոդվածի ու <<Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին>> ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի դրույթներով, հիմք ընդունելով ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի Շատվան բնակավայրի կրթահամալիր կառուցելու վերաբերյալ 2024 թվականի հունիսի 18-ին կայացած հանրային քննարկման արձանագրությունը՝ համայնքի ավագանին որոշում է.

1. Տալ համաձայնություն՝ ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի Շատվան բնակավայրում կրթահամալիրի կառուցման ՇՄԱԳ-Ի և փորձաքննության վերաբերյալ:

Հարցը ներկայացրեց համայնքի ղեկավարը նշելով, որ Շատվան բնակավայրում ևս կրթահամալիր կառուցելու վերաբերյալ հարցի շուրջ սույն թվականի հունիսի 18-ին, ժամը՝ 14:00-ին իրականացել է հանրային քննարկում, որը ստացել է դրական եզրակացություն, արդյունքները Ձեզ ներկայացված են: Առաջարկում եմ տալ Ձեր համաձայնությունը՝ ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի Շատվան բնակավայրում կրթահամալիրի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության վերաբերյալ:

Առարկություններ և առաջարկություններ չեղան:

24 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ ձայների հարաբերակցությամբ հարցն ընդունվեց:

Կողմ-24 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 92-Ա/

Լսեցին

***ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՓՈՔՐ ՄԱՍՐԻԿ***

**ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՇՄԱԳ ԵՎ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

/Զեկ. ԱՀԱՐՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ/

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 42-րդ հոդվածի ու <<Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին>> ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի դրույթներով, հիմք ընդունելով ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի Փոքր Մասրիկ բնակավայրի կրթահամալիր կառուցելու վերաբերյալ 2024 թվականի հունիսի 28-ին կայացած հանրային քննարկման արձանագրությունը՝ համայնքի ավագանին որոշում է.

1. Տալ համաձայնություն՝ ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի Փոքր Մասրիկ բնակավայրում կրթահամալիրի կառուցման ՇՄԱԳ-ի և փորձաքննության վերաբերյալ:

Հարցը ներկայացրեց համայնքի ղեկավարը նշելով, որ Փոքր Մասրիկ բնակավայրում կրթահամալիր կառուցելու հարցի վերաբերյալ սույն թվականի հունիսի 28-ին, ժամը՝ 16:00-ին տեղի է ունեցել հանրային քննարկում, որը ստացել է դրական եզրակացություն, արդյունքները Ձեզ ներկայացված են: Առաջարկում եմ տալ Ձեր համաձայնությունը՝ ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի Փոքր Մասրիկ բնակավայրում կրթահամալիրի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության վերաբերյալ:

Առարկություններ և առաջարկություններ չեղան:

24 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ ձայների հարաբերակցությամբ հարցն ընդունվեց:

Կողմ-24 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 91-Ա/

Լսեցին

***ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 13 ՓԵՏՐՎԱՐԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ <<ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ, ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> 5-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

/Զեկ. ԱՀԱՐՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ/

Ղեկավարվելով <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ և 2-րդ կետերով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետով, և հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝

1.<<ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ, ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> 5-Ա ՈՐՈՇՄԱՆ մեջ կատարել փոփոխություն՝

ավելացնելով 2 հաստիքային միավոր Վարորդ Աստղավարդ Հ/Կ պատկանող FORD Ավտոմեքենաների համար համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Հարցը ներկայացրեց համայնքի ղեկավարը նշելով, որ անհրաժեշտ է ավագանու <<Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վարդենիսի համայնքապետարանի աշխատակազմի կառուցվածքը, աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը եվ պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին>> 5-Ա որոշման մեջ կատարել փոփոխություն՝ ավելացնելով 2 հաստիքային միավոր, դրույքաչափը սահմանելով՝ 104 հազար ՀՀ դրամ. Վարորդ Աստղավարդ Հ/Կ պատկանող FORD Ավտոմեքենաների համար՝ տեխնիկական սպասարկում իրականացնող անձնակազմ բաժնում՝ խմբակցության գործավար տողից հետո:

Առարկություններ և առաջարկություններ չեղան:

24 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ ձայների հարաբերակցությամբ հարցն ընդունվեց:

Կողմ-24 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 90-Ա/

Լսեցին

***ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԲՅՈՒՋՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

/Զեկ. ՍԵՅՐԱՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ/

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, <<Բյուջետային համակարգի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի դրույթներով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի դրույթներով և հաշվի առնելով Վարդենիս համայնքի ղեկավարի առաջարկը՝ համայնքի ավագանին որոշում է թույլատրել համայնքի ղեկավարին.

Վարդենիս համայնքի 2024թ. համար հաստատված բյուջեում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1.Անհրաժեշտությունից ելնելով թույլատրել համայնքի ղեկավարին ,սոցիալական հատուկ արտոնություններ՝ 10,07,01 գործառնական դասակարգման 4729 տնտեսագիտական հոդվածից պակասեցնել 200,0 հազ.դրամ, այն ավելացնելով նույն գործառնական դասակարգման 4819 տնեսագիտական դասակարգման հոդվածին ՝Գեղարքունիք ՋՕԸ-ին նվիրատվություն տալու՝ Վարդենիս համայնքի ջրհան պոմպերի տրանսֆորմատային ենթակայանների համար յուղ ձեռք բերելու նպատակով:

2.Քննարկելով Աստղավարդ ՀԿ-ի դիմում խնդրանքը թույլատրել համայնքի ղեկավարին, Աստղավարդ ՀԿ-ին նվիրված երկու Ֆորդ մակնիշի միկրոավտոբուսների շահագործման և պահպանման նպատակով Վարդենիս համայնքի աշխատակազմի հաստիքային ցուցակում ավելացնել երկու վարորդների հաստիքային միավոր,իսկ ֆինանսական ծախսերում կատարել հետևյալ փոփոխությունները,համայնքի պահուստային ֆոնդից նշված վարորդներին 4111 տնտեսագիտական հոդվածով որպես աշխատավարձ հատկացնել1344 000 դրամ,դիզ վառելիքի և քսայուղերի ձեռք բերման համար հատկացնել630000 դրամ 6264 տնտեսագիտական հոդվածով, ինչպես նաև կատարել ապահովագրության, տեխզննման և գրանցման ծախսերը 260 000 դրամ: Ընդամենը 2234000 դրամ:

3. Թույլատրել համայնքի ղեկավարին <<ԳԵՈՊՐՈՄԱՅՆԻԳ ԳՈԼԴ>> ՍՊԸ կողմից հատկացված 3579000դրամը ուղղելու համայնքում իրականացվող միայն սպորտ միջոցառումների անցկացման և սպորտի զարգացման նպատակով:

Հարցը ներկայացրեց համայնքի ղեկավարը նշելով, որ անհրաժեշտ է Վարդենիս համայնքի 2024թ. համար հաստատված բյուջեում կատարել փոփոխություններ. մասնավորապես՝ առաջին կետի մասով, 200 հազար դրամի տեղափոխումը վերաբերվում է Վարդենիս համայնքի ջրհան պոմպերի տրանսֆորմատային ենթակայանների համար յուղ ձեռք բերելուն՝ հետագա աշխատանքները անխափան իրականացնելու նպատակով:

Երկրորդ կետով՝ ինչպես գիտենք, Վարդենիս համայնքում հաշմանդամ երեխաներին օգնելու նպատակով Ճապոնիայի Կառավարությունը՝ Աստղավարդ ՀԿ-ին նվիրաբերել է երկու Ֆորդ մակնիշի միկրոավտոբուսներ, որի շահագործման,պահպանման և սպասարկման ծախսերը հանձն է առել Վարդենիսի համայնքապետարանը: Այդ նպատակով անհրաժեշտություն է առաջացել Վարդենիս համայնքի աշխատակազմի հաստիքային ցուցակում ավելացնել երկու վարորդների հաստիքային միավոր և ավելացնել ընդհանուր առմամբ 2 միլիոն 234 հազար ՀՀ դրամի ծախս՝ վարորդներին աշխատավարձ տրամադրելու, դիզ վառելիքի և   քսայուղերի ձեռք բերման ,ապահովագրության ,տեխզննման և գրանցման համար:

Երրորդ կետով, անհրաժեշտ է սպորտի զարգացմանը զարկ տալու համար տալ Ձեր համաձայնությունը՝ <<ԳԵՈՊՐՈՄԱՅՆԻԳ ԳՈԼԴ>> ՍՊԸ կողմից հատկացված  3 միլիոն 579 հազար դրամը ուղղելու համայնքում իրականացվող միայն սպորտ միջոցառումների անցկացման և սպորտի զարգացման  նպատակով:

Առարկություններ և առաջարկություններ չեղան:

24 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ ձայների հարաբերակցությամբ հարցն ընդունվեց:

Կողմ-24 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 89-Ա/

Լսեցին

***ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

*/Զեկ. ԱՀԱՐՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ/*

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածի դրույթներով՝ համայնքի ավագանին որոշում է.

Հաստատել՝ 2024 թվականի հուլիսի 18-ին, ժամը 14:00-ին կայանալիք Վարդենիս համայնքի ավագանու արտահերթ նիստի օրակարգը՝ բաղկացած 12 հարցից.

1.ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ
2.ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 13 ՓԵՏՐՎԱՐԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ <<ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ, ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> 5-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ
3.ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՓՈՔՐ ՄԱՍՐԻԿ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՇՄԱԳ ԵՎ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ
4.ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՇԱՏՎԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՇՄԱԳ ԵՎ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ
5.ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐԵԳՈՒՆԻ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՇՄԱԳ ԵՎ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ
6.ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱԽԱԿԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՇՄԱԳ ԵՎ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ
7.ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ [illegible] ՎԱՐԴԵՆԻՍ

ՔԱՂԱՔԻ Վ.ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ՓՈՂՈՑԻ 95 ՀԱՍՑԵԻ [illegible]
ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

8.ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 05-064-0107-0075 ԾԱԾԿԱԳՐՈՎ 1.2ՀԱ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ <<ԱՅԼ ՀՈՂԱՏԵՍՔԻ>> ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ <<ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ>> ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

9.ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 05-015-0023-0001 ԾԱԾԿԱԳՐՈՎ 0,96359ՀԱ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ <<ՎԱՐԵԼԱՀՈՂ>> ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ <<ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ>> ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

10.<<ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՇԱՏՎԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ «ԲՈՒԺԱԿ ՄԱՆԿԱԲԱՐՁԱԿԱՆ ԿԵՏԻ» ԿԱՌՈՒՅՄԱՆ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

11.ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՔԱՂԱՔԻ ԹԻՎ 1 ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ՉԳՈՐԾՈՂ ԵՐԿՀԱՐԿԱՆԻ ՄԱՆՍՆԱՇԵՆՔԻ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՄԱՆ ՇՄԱԳ ԵՎ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

12.ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ԴԻՄՈՒՄՆԵՐԻ ՔՆՆԱՐԿՄԱՆ ԵՎ ԴՐԱՄԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՑԱԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

2024 թվականի հուլիսի 18-ին ժամը 14:00-ին կայացավ Վարդենիս համայնքի ավագանու արտահերթ նիստը: Ավագանու 27 անդամներից նիստին ներկա էին 20-ը, բացակայում էին <<Քաղաքացիական պայմանագիր խմբակցության>> ավագանու անդամներ Արամ Մելքոնյանը և Արտակ Մանուկյանը <<Միասնական Վարդենիս>> խմբակցության ավագանու անդամ Դավիթ Շահնազարյանը: Նիստը իրավազոր է: Նիստը վարում է համայնքի ղեկավար Աիարոն Խաչատրյանը: Նիստին մասնակցում էին աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետ Սեյրան Գրիգորյանը, քաղաքաշինության հողօգտագործման և հողաշինության բաժնի պետ Աբգար Աբգարյանը և այլ անձինք: Համայնքի ղեկավարը ներկայացրեց օրակարգ, 12 հարցից՝ ելույթում նշելով՝

Քանի որ, մենք ունեինք ժամանակի խնդիր, և հարցերը շտապ պիտի ներկայացվեր Ձեր քննարկմանը, որպեսզի ծրագրերի իրականացման բնականոն ընթացքը չխախտվի, նշանակվեց ավագանու արտահերթ նիստ:

Նախորդ նիստում Ձեզ արդեն ներկայացվել է, որ ՀՀ Կառավարության 2093 Ն որոշման համաձայն Հայաստանի Հանրապետությունում իրականացվում է կրթահամալիրների կառուցման ծրագիր, և մեր համայնքը անմասն չի մնացել նշված ծրագրից: 12 հարցերից չորսը վերաբերվում է կրթահամալիրների կառուցմանը:

Այժմ ընթերցում եմ օրակարգում ընդգրկված հարցերը՝ ըստ հերթականության:

Օրակարգը հաստատելու մասին հարցը դրվեց քվեարկության:

24 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ ձայների հարաբերակցությամբ հարցն ընդունվեց:

Կողմ-24 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 88-Ա/

Ավագանու անդամներ

ԱՐՄԻՆԵ ԱՂԱՋԱՆՅԱՆ

ԱՐՈՒՍՅԱԿ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ՎԱՐՈՒԺԱՆ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ՀԱՄԼԵՏ ԲԱՃՈՅԱՆ

ԱՇՈՏ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀԱՅԿ ԵՐԱՆՈՍՅԱՆ

ՄԵԼԱՆՅԱ ԵՓՐԵՄՅԱՆ

ԱՀԱՐՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԱՇՈՏ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՆԵԼԼԻ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՌԱՖԱՅԵԼ ԽՉԵՅԱՆ

ԱՐԱՔՍՅԱ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

ՍՊԱՐՏԱԿ ՀՈՎՀԱՆԻՍՅԱՆ

ԱՐՄԱՆ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

ՆԱԻՐԱ ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ

ՎԱՐԴԱՆ ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՍԱԹԵՆԻԿ ՄԻՆԱՍՅԱՆ

ԿԱՐԵՆ ՄԿՐՏՉՅԱՆ

ՄՈՒՇԵՂ ՇԱԲՈՅԱՆ

ԶԱՎԵՆ ՇՀՈՅԱՆ

ՌՈՄԵԼՅԱ ՍԱՐԳՍՅԱՆ

ԿԱՐԵՆ ՍԻՄՈՆՅԱՆ

ՍԵՎԱԿ ՍԻՄՈՆՅԱՆ

ՋԵՄԱՐԱ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ԱՀԱՐՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ ____________

*Նիստն արձանագրեց՝* Կամո Զարոյանը ____________